

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունը անց է կացնում սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման աշխատանքները:

Կառավարչի որակավորում ստանալու համար կարող են դիմել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և առնվազն մեկ տարի վարել են որևէ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման կամ ղեկավարման հետ կապված պաշտոններ կամ անցել են <<Անվճարունակության (սնանկության) մասին>> Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված համապատասխան ստաժավորում՝ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունում:

Դիմորդը որակավորման ստուգման համար Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն (հասցե՝ ք. Ստեփա-նակերտ, Փետրվարի 20) է ներկայացնում՝

- 1) դիմում (սահմանված ձևի).
- 2) անձնագիրը և դրա պատճենը.
- 3) աշխատանքային գրքույկը կամ սույն հայտարարությամբ նախատեսված պահանջներին համապատասխանելու փաստը հավաստող փաստաթուղթը և դրանց պատճենները.
- 4) 2 գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի:

Կառավարչի որակավորման ստուգման անցկացման վայրի և ժամանակի վերաբերյալ լրացուցիչ կոտեղեկացվի դիմողներին, ինչպես նաև կհրապարակվի Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում (www.minjustnkr.am):

Կառավարչի որակավորման ստուգման հետ կապված հարցերը կարգավորված են <<Սնանկության մասին>> Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի <<Սնանկության գործով կառավարչի որակավորման կարգը հաստատելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի մարտի 6-ի N 101 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1060-Ն որոշմամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ 94-92-64 հեռախոսահամարով:

Վերը նշված փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել մինչև 18.10.2013 թվականը:

18.09.2013 թ